«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

16 դեկտեմբերի, 2025թ. N 35 - Լ

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 2–րդ մասի 5-րդ կետը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 8.1.7 կետը, ՀՀ ֆինանսների նախարարի «Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին» 07.10.2022թ N 420-Ն հրամանը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության կողմից 2026 թվականի աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման (այսուհետ՝ Արտաքին գնահատում) ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը և արտաքին գնահատման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Պալատի գործադիր տնօրինությանը Արտաքին գնահատումը կազմակերպել սահմանված ժամանակացույցի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2025 թ. դեկտեմբերի 16-ի N 35 - Լ որոշման

Հ/Հ	ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ԱՄԻՍ
1.	«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Ապրիլ
2.	«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	Մայիս
3.	«ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊԸ	Հունիս
4.	«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	Հուլիս
5.	«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ	Օգոստոս
6.	«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	Սեպտեմբեր
7.	«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ	Հոկտեմբեր
8.	«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ	Նոյեմբեր
9.	«ՆԵՔՍԻԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Դեկտեմբեր